ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Ժողովրդավարացման 3-րդ ալիքի մեջ, որը սկսվել է 1970-ական թթ., հատուկ տեղ է գրավում 1980-ական թթ. վերջին սկիզբ առած հետսոցիալիստական փոխակերպման փուլը: Այդ ժամանակ փլուզվեցին արևելյան ռազմա-քաղաքական բլոկը և Խորհրդային Միությունը: Հետսոցիալիստական և մասնավորապես հետխորհրդային փուլում մենք գործ ունենք համակարգային փոխակերպման հետ՝ ավտորիտար ձևից ժողովրդավարական ձևի քաղաքական համակարգի համալիր փոխակերպում, ինչպես նաև տնտեսական համակարգի արմատական փոփոխությունների հետ: Հետխորհրդային փուլում ոչ միայն վերակառուցվում կամ բարեփոխվում են ամբողջատիրական ինստիտուտները, այլև սկսվում է նոր սոցիալական համակարգերի կառուցում:

Որպեսզի հնարավոր լինի հետևել, թե ինչպես է ընթանում ժողովրդավարության զարգացման գործընթացը, և հասկանալ դրա պատճառներն ու հետևանքները, անհրաժեշտ է «ժողովրդավարություն» տերմինի բովանդակության հասկացութային հստակության բարձր մակարդակ: Սակայն, դրա փոխարեն ժողովրդավարության մասին տեսական և էմպիրիկ գրականության մեջ տիրում է այնպիսի հասկացութային քաոս, որ Դ. Կոլլերը և Ս. Լևիցկին հայտնաբերել են ժողովրդավարության 550 ենթատեսակ[1]:

Տեսաբանների մեծ մասը, երբ ուսումնասիրում են ժողովրդավարական տարանցումը, կենտրոնանում են երկու հասկացութային ուրվագծերից մեկի վրա՝

1. *«մրցակցային էլիտիզմ» շումպետերյան տարբերակով, որում ժողովրդավարության միակ չափանիշը, ըստ էության, հանդես է գալիս իշխանական պաշտոնների հերթագայումը ազատ և արդար ընտրությունների միջոցով [2,էջ 269]:*
2. *Ռ. Դալի «պոլիարխիայի» բազմակարծական մոդելը, որի սահմաններում քաղաքական վարչակարգի գլխավոր չափորոշիչներ են հանդիսանում ոչ միայն մրցակցությունը և մասնակցությունը, այլ նաև ազատության(խոսքի, ՁԼՄ-ների և այլն) և բազմակարծության բարձր մակարդակը, որոնք թույլ են*

տալիս մարդկանց արտահայտել իրենց քաղաքական նախասիրությունները [3, էջ3]:

Մի շարք տեսաբաններ անցկացնում են լրացուցիչ տարբերակումներ ժողովրդավարության «մինիմալիստական» (գործընթացային) և «մաքսիմալիստական» (բովանդակային) տեսակետների միջև (Օ'Դոնել, Դայմոնդ) և ուշադրությունը կենտրոնացնում են նոր ժողովրդավարությունների համախմբման մակարդակի վրա (Մերկել, Լինց և Ստեփան):

Նպատակահարմար է տվյալ աշխատանքը կառուցել Խ. Լինցի և Ա. Ստեփանի առաջարկած ժողովրդավարության համախմբման չափանիշների հիման վրա:

Նախ անհրաժեշտ է սահմանել ժողովրդավարության համախմբում հասկացությունը: Հասկացությունը քաղաքագիտություն ներմուծել է պրոֆեսոր Խ. Լինցը, որը նա մեկնաբանում է որպես փոխակերպված քաղաքական վարչակարգի վերջնական արդյունք: Ըստ նրա «համախմբված ժողովրդավարություն ասելով ի նկատի ունենք մի քաղաքական վարչակարգ, որում ժողովրդավարությունը որպես ինստիտուտների, օրենքների և ձևականացված դրդապատճառների և խոչընդոտների ամբողջական համակարգ, դարձել է «միակ խաղը քաղաքում»» [4, էջ 15]: Ըստ Լինցի ժողովրդավարությունը համախմբված է, երբ՝

1) *ձեռք է բերված որոշակի համաձայնություն կառավարության փոփոխման վերաբերյալ,*
2) *կառավարությունը նոր ռազմավարության մշակման համար փաստորեն ստանում է իշխանության լծակները,*
3) *օրինական ձևով ստեղծված նոր իշխանությունները իրենց լիազորությունները չեն փոխանցում այլ մարմինների:*

Նա, որպես համախմբման բնութագրիչ գծեր առաջարկում է 3 վերլուծական չափանիշ՝ վարքագծային չափանիշ, կողմնորոշման չափանիշ և սահմանադրական չափանիշ:

Ըստ վարքագծային չափանիշի ժողովրդավարությունը դառնում է միակ խաղը քաղաքում, երբ ոչ մի կարևոր քաղաքական խումբ լրջորեն չի փորձում տապալել վարչակարգը և չի օժանդակում ներքին կամ միջազգային բռնությանը, որպես պետության կազմից դուրս գալու միջոց: Ըստ կողմնորոշման չափանիշի ժողովրդավարությունը դառնում է միակ խաղը քաղաքում, երբ անգամ քաղաքական և տնտեսական ճգնաժամերի առճակատման ժամանակ, մարդկանց ճնշող մեծամասնությունը հավատում է, որ յուրաքանչյուր հետագա քաղաքական փոփոխություն պետք է իրականացվի ժողովրդավարական ընթացակարգերի չափանիշներին համապատասխան: Ըստ սահմանադրական

չափանիշի ժողովրդավարությունը դառնում է միակ խաղը քաղաքում, երբ քաղաքական համակարգի բոլոր դերակատարները կհամակերպվեն այն փաստի հետ, որ քաղաքական կոնֆլիկտը պետության ներսում կլուծվի սահմանված նորմերին համապատասխան [4, էջ 15]:

Այսպիսով, այժմ անհրաժեշտ է անդրադառնալ այն չափանիշներին, որոնք հանդիսանում են ժողովրդավարության համախմբման նախապայմաններ: Այդպիսի չափանիշներ առաջարկել են բազմաթիվ գիտնականներ, որոնցից մենք կարևորում ենք, ինչպես արդեն նշել ենք, Խուան Լինցի և Ալֆրեդ Ստեփանի առաջարկած պայմանները: Այդ պայմաններն են՝

1) *Պետք է գոյություն ունենա ազատ և կենսունակ քաղաքացիական հասարակություն:*
2) *Պետք է լինի հարաբերականորեն ինքնավար քաղաքական հասարակություն:*
3) *Պետության ամբողջ տարածքում բոլոր գլխավոր քաղաքական դերակատարները, հատկապես կառավարությունը և պետական ապարատը, պետք է ենթարկվեն օրենքի գերակայությանը, որը պաշտպանում է անհատների ազատությունը և հասարակական կյանքը:*
4) *Պետք է լինի պետական բյուրոկրատական ապարատ, որը պիտանի կլինի օգտագործվելու նոր ժողովրդական կառավարության կողմից:*
5) *Պետք է լինի ինստիտուցիոնալ տնտեսական հասարակություն* [4, 15-17]:

Տվյալ աշխատանքը կառուցված է երեք հիմնական ոլորտների՝ քաղաքացիական, քաղաքական և տնտեսական հասարակությունների վերլուծության և նրանց փոխհարաբերությունների հիման վրա:

Ըստ Լինցի և Ստեփանի «քաղաքացիական հասարակությունը» քաղաքական համակարգի այն ասպարեզն է, որտեղ ինքնակազմակերպ և հարաբերականորեն ինքնավար խմբերը, շարժումները և անհատները փորձում են հստակ ձևակերպել արժեքները, ստեղծել խմբեր և միասնություններ և առաջ տանել դրանց շահերը: Քաղաքացիական հասարակությունը կարող է ներառել բազմաստիճան սոցիալական շարժումներ (օր.՝ կանանց խմբեր, կրոնական խմբավորումներ կամ մտավորականների կազմակերպություններ) ինչպես նաև խմբեր ամբողջ սոցիալական շերտից (ինչպիսիք են ԶԼՄ-ները, հասարակական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, ծեռնարկատերերի խմբերը և այլն):

«Քաղաքական հասարակություն» ասելով հեղինակները ի նկատի ունեն այն ասպարեզը, որում քաղաքական դերակատարները մրցակցում են լեգիտիմ իրավունքի համար, որպեսզի վերահսկեն հասարակական իշխանությունը և պետական ապարատը: Քաղաքացիական հասարակությունը ինքնուրույն

կարող է վերացնել ոչ ժողովրդավարական վարչակարգը, բայց ժողովրդավարական համախմբումը պետք է ներառի նաև քաղաքական հասարակությունը: Ժողովրդավարության համախմբումը պահանջում է, որպեսզի քաղաքացիները զարգացնեն ժողովրդավարական քաղաքական հասարակության էական ինստիտուտների ընդունումը՝ քաղաքական կուսակցություններ, օրենսդիր մարմին, ընտրություններ, ընտրական օրենսգիրք, քաղաքական լիդերություն և միջկուսակցական միավորումներ:

Ժողովրդավարության համախմբման հաջորդ օժանդակող պայմանը վերաբերում է տնտեսությանը՝ այն ասպարեզին, որ անվանվում է «տնտեսական հասարակություն»: Օգտագործելով այս բառակապակցությունը՝ հեղինակները ուշադրությունը սևեռում են տեսական և գործնական երկու պահանջների վրա՝ *1) չի եղել ու չի կարող լինել համախմբված ժողովրդավարություն, որը կունենար վարչահրամայական տնտեսություն (բացառապես պատերազմական վիճակի), 2) չեն եղել ու չեն լինի համախմբված ժողովրդավարություններ ամբողջությամբ անկախ շուկայական տնտեսությամբ:* Արդի ժողովրդավարությունները, որոնք ցանկանում են համախմբվել, պահանջում են սոցիալ-քաղաքական մշակված և ընդունված նորմերի, ինստիտուտների և կանոնակարգումների միասնություն՝ տնտեսական հասարակություն, որը կդառնա միջնորդ պետության և շուկայի միջև:

Այժմ տեսնենք թե ինչպես է իրականացվում այս ոլորտների ինստիտուցիոնալացման և համախմբման գործընթացը Հայաստանում:

Քաղաքացիական հասարակություն

Քաղաքացիական հասարակության զարգացվածության մակարդակը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ուսումնասիրել դրա կարևորագույն ինստիտուտները: Տվյալ աշխատանքում տեղ կգտնեն առավել կարևորություն ունեցող ինստիտուտները՝ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունները և ՁԼՄ-ները: Որպեսզի հասկանանք քաղաքացիական հասարարակության զարգացվածության աստիճանը և դրա արդյունավետությունը ժողովրդավարացման գործընթացում, պետք է փորձենք պատասխանել հետևյալ հարցերին՝

- արդյո՞ք դրանց գործունեության համար ստեղծված են ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան պայմաններ, և
- արդյո՞ք դրանք արդյունավետ են գործում, թե ոչ:

Քաղաքացիական հասարակության կարևոր ինստիտուտներից մեկը ոչ կառավարական կազմակերպություններն(ՈՀԿ) են: Հայաստանում ոչ կառավարական կազմակերպությունների ինստիտուտի սկզբնավորման և ակտիվ գործունեության ժամանակը համարում են 1990-ական թթ. կեսերը:

Ա. Թադևոսյանը Հայաստանում 1997-1998 թթ. բնութագրում է որպես ՈԿԿ-ների քանակական աճի փուլ, իսկ 1998 թ.-ից հետո՝ դրանց որակական աճի փուլ: 2003 թ.-ի տվյալներով Հայաստանում դրանց թիվը 2000-ից ավելի է, սակայն միայն 20-25%-ն են գործառնական: Հիմնականում ՈԿԿ-ները ակտիվ գործունեություն են ծավալում սոցիալական, առողջապահական և այլ ծառայությունների ոլորտներում, ինչը օգնում է իշխանությունների կամայականություններից խուսափելուն: Եվ ամենակարևորը այն է, որ ՈԿԿ-ները մեծ աշխատանք են կատարում հասարակության քաղաքացիական մշակույթի ձևավորման գործընթացում[5, էջ 85]:

Սակայն այս ինստիտուտի գործունեության համար կան շատ խոչընդոտներ և խնդիրներ: Այդ խնդիրները հետևյալն են՝

- պետության և հասարակության կողմից ՈԿԿ-ների նկատմամբ անվստահությունը խոչընդոտում է դրանց մինչև վերջ հաղթահարել պետական խնամակալության ուղղակի կամ թաքնված միտումները,
- պետության կողմից ֆինանսավորման բացակայության պայմաններում, ՈԿԿ-ները շատ դեպքերում դառնում են արևմտյան ֆոնդերի հաճախորդները, ինչը դրանց ստիպում է հարմարվել այդ ֆոնդերում գոյություն ունեցող առաջնայնություններին,
- կատարվող նախագծերը և հասարակության իրական խնդիրների պահանջները չեն համընկնում: ՈԿԿ-ների ֆինանսական կայունությունը դժվար է տարվում, քանի որ դրանք փաստորեն չեն ներգրավվում ծառայությունների իրական շուկայում:

Չնայած նման խնդիրների առկայության պայմաններում թերևս կարելի է արձանագրել ՈԿԿ-ների մեծ ազդեցություն քաղաքացիական հասարկության մակարդակի բարձրացման վրա:

Հաջորդ ինստիտուտը՝ զանգվածային լրատվամիջոցներն են: Այս ինստիտուտի համար կարելի է առանձնացնել հետևյալ խնդիրները: Առաջին՝ սուբյեկտիվիզմը և/կամ մանիպուլյացիաները: 20-րդ դարի սկզբից և դրա ամբողջ ընթացքում Հայաստանի (ինչպես նաև մյուս հետխորհրդային երկրների) ՁԼՄ-ները ավելի շատ զբաղվել են ագիտացիաներով և պրոպագանդաներով, քան տեղեկատվության տարածումով: Այն դեպքերում երբ ՁԼՄ-ները իրենց հիմնական խնդիրը սկսել են համարել տեղեկատվության տարածումը, դրանց ուղղակի արգելել են աշխատել (օր.՝ U1[+] հեռուստաընկերությունը): Այդպիսով գոյատևել են միայն «սպասարկող» ՁԼՄ-ները, որոնք կորցրել են իրենց նկատմամբ վստահությունը: Ինչպես գիտենք ժողովրդավարական պետություններում ՁԼՄ-ների ազատությունը պետք է իրավականորեն ապահովված լինի, օրինակ՝ ՀՀ սահմանմադրության 27 հոդվածի 3-րդ մասում

ասվում է. «Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է» [6, հոդվ.27]: Սակայն այս ամենը բավարար չէ, որպեսզի դրանք իրենց ազատ ու ապահով զգան: Եթե երկրի իշխանությունները ոչ միայն իրավականորեն, այլ նաև փաստացիորեն չեն օժանդակում ՁԼՄ-ների ազատությանը, ապա դրանք իրենց չեն կարող ազատ և երաշխավորված համարել: Եթե իշխանական մարմինները իրոք պայքարում են ՁԼՄ-ների ազատության համար, ապա ՁԼՄ-ները իրենց ապահով և երաշխավորված զգալով կկարեն ավելի արդյունավետ կատարել իրենց «ժողովրդավարական դերը»:

Երկրորդ խնդիրը ՁԼՄ-ների կախվածությունը ևԿամ հասարակական վերահսկողության բացակայությունն է. Սա նկատի ունի այն, որ դեռևս շատ ՁԼՄ-ներ հանդես են գալիս որպես այս կամ այն քաղաքական և տնտեսական խմբերի հնազանդ գործիք: Այսինքն՝ այն հանգամանքը, որ Հայաստանը Եվրոպայի խորհրդի պահանջով օրենք է ընդունել պետական հեռուստաընկերությունները Հանրային հեռուստաընկերություններով փոխարինելու մասին, պետք է ոչ միայն ձևական օրենքի տեսքով, այլ նաև փաստացիորեն իրականացնի այդ պահանջը: Այս հանգամանքից բխում է հաջորդ խնդիրը՝ ինքնակարգավորման հնարավորության սահմանափակումը: Նկատի է առնվում այն հանգամանքը, որ գրեթե բացակայում են այն ՁԼՄ-ները, որոնք ներկայացնում են ամբողջական և օբյեկտիվ տեղեկատվությունը տեղի ունեցող իրադարձությունների մասին և թույլ չեն տալիս, որ հասարակությունը ինքը տա իրադարձության ճիշտ գնահատականը: Այս մարմինը դեռևս այնքանով է ենթարկվում ուղղակի և թաքնված քաղաքական ազդեցության, որ չի կարող կատարել «հասարակական վերահսկչի» իր ամենակարևոր գործառույթը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դեռևս շատ խնդիրներ կան, որոնք պետք է լուծվեն ժողովրդավարական քաղաքացիական հասարակություն ստեղծելու համար: Այժմ անդրադառնանք քաղաքական հասարակությանը:

Քաղաքական հասարակություն կամ քաղաքական էլիտա

Հետխորհրդային երկրներից շատերում քաղաքական էլիտան ներկայացնում էր այն խավը, որը խորհրդային շրջանի ծնունդ էր: Այդ քաղաքական էլիտայի ներկայացուցիչներից շատերը նույն սոցիալիստական նոմենկլատուրային բյուրոկրատիայի ներկայացուցիչներ էին: Նրանք ժամանակի պահանջը օգտագործելով, ժողովրդավարական սկզբունքները հիմք ընդունելով՝ իրականացրեցին հեղափոխություն և գրավեցին իշխանությունը: Իհարկե հասկանալի է, որ այլ կերպ չէր կարող դասավորվել իրադրությունը, երբ գործում էր միակուսակցական համակարգը և չկային այլընտրանքային կուսակցություններ, չկար բազմակարծություն և վերջապես բացակայում էին քաղաքացիական հասարակության տարրերը: Այստեղ խնդիրն այն է, թե արդյո՞ք հետ-

խորհրդային քաղաքական էլիտանները փորձում էին զարգացնել ժողովրդավարական սկզբունքները, թե շարունակում էին վարել ազատականացված կոմունիստական քաղաքականություն: Քաղաքական հասարակության ոլորտում առաջին հերթին պետք է վերլուծել քաղաքական կուսակցությունները և բազմակուսակցական համակարգի ձևավորման միտումները, այնուհետև խոսել հետխորհրդային քաղաքական էլիտաների մի քանի առանձին դերակատարների՝ Լ. Տեր-Պետրոսյանի և իհարկե նրան սատարող քաղաքական իշխանություն ունեցող՝ Հայոց համազգային շարժում կուսակցության մասին:

Քաղաքական կուսակցությունները ժողովրդավարական հասարակության կարևորագույն ինստիտուտն է: Քաղաքական համակարգի ժողովրդավարացումը անհնար է առանց կուսակցությունների քաղաքակիրթ մրցակցության և համագործակցության:

ՀՀ-ում գործում է բազմակուսակցական համակարգ: Բազմակուսակցական է համարվում այն համակարգը, որտեղ գործում են երկուսից ավելի կուսակցություններ, որոնք ի վիճակի են վերցնել պետական իշխանությունը իրենց ձեռքը: Սակայն, որքան էլ շատ լինի կուսակցությունների քանակը, այն չի կարելի բազմակուսակցական համարել, եթե պետական իշխանության մարմինների ձևավորման գործընթացում կուսակցությունների մասնակցության համար չկան բարենպաստ պայմաններ: Արդյունքում, գործող կուսակցությունները չեն կատարում իրենց հիմնական գործառույթները և չեն ստեղծում կենսունակ և դինամիկ կապ հասարակության և պետության միջև:

Հայաստանում բազմակուսակցական համակարգը փաստացիորեն ձևավորվել է 1988-1989 թթ., սակայն դրա իրավական հիմքը դրվել է միայն 1991թ., երբ փետրվարի 26-ին հանրապետության Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»: Բազմակուսակցական համակարգը վերջնականապես ձևավորվեց այն ժամանակ, երբ 1995թ.-ին ընդունվեց Սահմանադրությունը, որում մի շարք հոդվածներ վերաբերում են քաղաքական կուսակցություններին:

Իհարկե վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում ձևականորեն գործում են այնպիսի օրենքներ, որոնք օժանդակում են բազմակուսակցական համակարգի ձևավորմանը: Սակայն Հայաստանում գոյություն ունեցող բազմաթիվ կուսակցությունները (շուրջ 75), դեռևս չեն ապացուցում, որ ՀՀ-ում գործում է իրական բազմակուսակցական համակարգ:

ՀՀ-ում 1991թ.-ին կատարված օրենսդրական փոփոխությունները իշխանության նժարը թեքեցին հօգուտ կառավարման նախագահական ձևի՝ ինչը նվազեցրեց խորհրդարանի դերը: Դրանում մեծ նշանակություն ունեցավ իշխանական ՀՀՇ կուսակցությունը, որը բացարձակ մեծամասնություն ուներ

խորհրդարանում: Ավելին՝ ՀՀՇ-ն 1990-ականների սկզբին հանդես էր գալիս որպես միակ համաժողովրդական շարժում՝ դրանով իսկ ստվերելով մյուս քաղաքական կուսակցությունների դերը, որոնք խաղից դուրս մնացին: Այս կուսակցությունը մնաց իշխանությունում մինչև 1998 թ.-ի փետրվարի 3-ը, երբ երկրի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հրաժարական ներկայացրեց և Խորհրդարանը ընդունեց այն: 1999 թ.-ի մայիսի 30-ին անցկացրած խորհրդարանական ընտրությունները կարծես փոխեցին երկրի քաղաքական իրավիճակը: Խորհրդարանում ձևավորված կոալիցիան ոչ թե ներկայացնում էր նախագահին և նրա շահերը, այլ ներկայացնում էր որոշակի ընդդիմություն, որն ի վիճակի էր սահմանափակել և վերահսկել երկրի նախագահին: Նույն թվականի հոկտեմբերի 27-ին կատարված դեպքերից հետո Խորհրդարանում իր դիրքերն ամրապնդեց «Հանրապետական» կուսակցությունը, որը նույնպես ներկայացնում էր նախագահի շահերը: Սակայն պետք է նշել, որ ՀՀ-ում իրականացված սահմանադրական փոփոխությունը թեև քիչ, բայց որոշակիորեն նվազեցրեց նախագահի լիազորությունները:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, օրենքով սահմանված կարգով, սակայն ձևականորեն գործում է բազմակուսակցությունը, որը ամրապնդելու համար դեռևս շատ խնդիրներ կան լուծելու:

Ինչպես արդեն նշել ենք, հետխորհրդային գրեթե բոլոր դերակատարները կոմունիստական աշխարհայացքի և քաղաքական հայացքների ծնունդ են: Այդ իսկ պատճառով գրեթե բոլոր երկրներում միակուսակցական դիկտատուրայից խուսափելու համար նախապատվությունը տրվեց կառավարման նախագահական ձևին: ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը կառավարման սկզբնական շրջանում օժտված էր հարիզմայով և լեգիտիմությամբ, իսկ հետագայում՝ Սահմանադրության ընդունումից հետո՝ նաև օրինականությամբ:

Առաջին ընտրությունում, որում մասնակցեց Լ. Տեր-Պետրոսյանը, ընտրողների 90%-ից ավելին օժանդակեցին նրան: Նա օժտվեց հարիզմայով, քանի որ ՀՀ ազգաբնակչությունը նրան տեսնում էր որպես «կոմունիստական հրեշին սպանող ասպետ», ով իր հետ բերել էր քաղաքացիների ազատություններ և իրավունքներ, ազգի ինքնիշխանություն և վերջապես ժողովրդի իշխանություն: Սակայն երբ հայ ժողովուրդը արթնացավ լեթարգիական քնից և զգաց, որ խաբվել է, նախագահին մնում էր միայն օրինականացնել իր կառավարումը:

Օրինականացումը, իհարկե, իրականացվեց երկրի գերագույն օրենքի՝ Սահմանադրության միջոցով: Ինչպես գիտենք Սահմանադրությունների գլխավոր նպատակներից մեկը իշխանությունների բաժանումը և հավասարակշռումն է: Իհարկե պետք է ընդունել այն փաստը, որ նշված սկզբունքը պահպանվեց, սակայն որոշակի շեղումներով, այսինքն՝ բաժանումն իրականացվեց, իսկ

հավասարակշռումը ամրագրվեց միայն իշխանության մեկ թևի՝ նախագահի օգտին:

Սակայն այս ամենը դեռևս բավարար չէ նախագահի իշխանությունը բացարձակացնելու համար, քանի դեռ կա խորհրդարանի՝ որպես անկախ մարմնի գործունեության վտանգը: Իհարկե «հանճարեղ» ղեկավարը սրան էլ լուծում գտավ՝ մեծամասնություն խորհրդարանում ՀՀԾ-ի գլխավորությամբ: «Եվ ակնհայտ է, որ նման էլիտան, իր բնույթով հակված լինելով դեպի կլանային և անձնական շահերը ի վիճակի չէր լուծելու այնպիսի բարդագույն խնդիր, ինչպիսին է հասարակության անցումը ամբողջատիրությունից շուկայական տնտեսության և ժողովրդավարության: Փոխարենը իշխող վերնախավը օգտագործելով իշխանական լծակները, հաջողությամբ յուրացրեց և մսխեց պետական սեփականությունը, իսկ հետագայում նույն լծակների միջոցով ամեն ջանք գործադրեց պահպանելու ծեռք բերածը՝ ընդհուպ մինչև զինված ուժի կիրառում: Սա էլ իր հերթին նպաստեց իշխանական համակարգում ուժային-ների դերակատարության բարձրացմանը» [7, էջեր 339-341]: Ներկայումս ՀՀ-ում պահպանվում է վերը նշված իրավիճակը:

Իմ կարծիքով տվյալ իրավիճակի կարգավորման միակ ուղին քաղաքա-կան՝ գաղափարական սերնդափոխությունն է: Այսինքն՝ երբ իշխող էլիտան կկազմավորվի այնպիսի մարդկանց կողմից, որոնց մեջ ներդրված են իրական ժողովրդավարական սկզբունքները, այլ ոչ թե նրանք իրականացնում են Արևմուտքի պահանջները: Այսպիսով, ուսումնասիրելով քաղաքական հասարա-կությունը, այժմ անդրադառնանք քաղաքական և տնտեսական հասարակու-թյունների փոխազդեցության խնդիրները:

Տնտեսական հասարակություն

Փոխակերպվող երկրներում տնտեսական բարեփոխման ընթացքը և իրա-կանացվող փոփոխությունների հակասող բնույթը հիմնականում պայմանավոր-ված է միջին խավի ձևավորման դժվարությունների հետ: Այդ երկրներում առաջացել է սոցիալական շերտավորում, որն արդեն չի հանդիսանում ավանդական նոմենկլատուրա, և միևնույն ժամանակ այն դեռևս դասական բուրժուազիա չէ, հետևաբար սոցիալիստական տնտեսությունը անցյալում է, բայց և այնպես դեռևս գոյություն չունի կապիտալիստական տնտեսություն՝ իրեն բնորոշ շուկայական պայմաններում արտադրանքի կողմնորոշմամբ: Իսկ եթե ո՞չ սոցիալիստական, ո՞չ էլ կապիտալիստական, ապա ինչպե՞ս կարող ենք բնութագրել ՀՀ-ի տնտեսությունը:

ՀՀ-ում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որ տնտեսական էլիտայի ներկայացուցիչները կարող էին շրջանցել օրենսդրությունը՝ քաղաքական էլիտայի ներկայացուցիչների հետ ոչ պաշտոնական համաձայնությունների

միջոցով. ինչը իշխանական բարձրագույն խումբը ընկալում էր որպես կապիտալիզմի բնական պատմական զարգացում և կապիտալի կուտակման նախնական գործընթաց: Բիզնեսին թույլատրում էին խախտել օրենքները, իսկ քաղաքական էլիտային՝ հարստանալ իրենց ծառայողական դիրքի (սեփական շահերի համար) օգտագործման միջոցով: Սակայն, եթե այդ միջոցով իշխանությունը թույլացնում է պետության տնտեսական ճնշումը բիզնեսի վրա և հնարավորություն է տալիս զարգանալ, ապա այն միևնույն ժամանակ ուժեղացնում է քաղաքական ազդեցությունը, ինչի արդյունքում բիզնեսը դառնում է քաղաքական և բյուրոկրատական իշխանությունների գերին: Պետական այրերը ոչ միայն հարստանում են ձեռնարկատերերի կաշառքների հաշվին, այլ նաև նրանց ստիպում են զիջել իրենց մասնաբաժնի մի մասը: Միևնույն ժամանակ կոռումպացված քաղաքական պաշտոնյաները բիզնեսի ներկայացուցիչների համար հանդիսանում էին այսպես կոչված «թիկունք», օրինազանցությունների ժամանակ:

Ինչպես գիտենք, քաղաքական իշխանության համար մղվող պայքարում ժողովրդավարական գործընթացները պետք է ապահովվեն ոչ պետական ֆինանսական միջոցներով: Այդ պատճառով իշխող քաղաքական ուժերը փորձում են բիզնեսը պահել իրենց վերահսկողության ներքո, իսկ ձեռնարկատերերը, իրենց հերթին, նույնպես հետաքրքրված են պաշտպաններով՝ իրենց շահերը պաշտպանող տիրող քաղաքական ուժով [8,էջեր 99-101]:

Այսպիսով, նման խառը իրավիճակում առաջացան տնտեսական ազդեցիկ խմբեր, որոնք օգտվելով երկրում ստեղծված քաոսային իրավիճակից, սկսեցին ճնշում գործադրել իշխանությունների վրա տարբեր դրամական օժանդակություններ, հարկային արտոնություններ և նպատակային վարկեր ստանալու համար, ինչը բացասաբար ազդեց երկրի մակրոտնտեսության կայունության վրա: Որոշ ժամանակ անց այդ խմբերը գիտակցեցին, որ երկրի տնտեսական կայունությունը նաև շահավետ է իրենց համար, և որ կայուն գները նրանց տնտեսական դիրքի ամրապնդման հիմքերից է: Իրենց համար նաև շահավետ էր սեփականաշնորհումը, քանի որ նրանք արդեն հասցրել էին կուտակել բավականին հարստություն և ազդելով պետական համակարգի վրա, իրենց հարստությունը օգտագործեցին պետական ակտիվները շահավետ պայմաններով ձեռք բերելու համար: Այդպիսով, ազդեցիկ խմբերը օժանդակեցին ինչպես մակրոտնտեսության կայունացմանը, այնպես էլ սեփականաշնորհմանը:

Սակայն ոչ բոլոր բարեփոխումներն էին շահավետ նման խմբերի համար և նրանք դեմ էին դուրս գալիս դրանց: Օրինակ շուկայի ազատականացումը և մրցակցային դաշտի ձևավորումը խոչընդոտ էին նրանց մենաշնորհային դիրքի համար: Այս ամենի արդյունքում, կարճ ժամանակահատվածում ակտիվները

հիմնականում կենտրոնացան մենաշնորհային ձեռներեցների ձեռքերում, ինչն ավելի ուժեղացրեց նրանց: Նման տնտեսական ազդեցիկ խմբերը խոչընդոտեցին տնտեսության բարեփոխմանը, քանի որ նրանք կողմ էին մասնակի շուկայական տնտեսության անցմանը և ձգտում էին այնպիսի վիճակի, որի դեպքում գոյություն կունենար սեփականության իրավունք, բայց չէր լինի բոլորի համար հավասար պայմաններով մրցակցող շուկա: Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում առաջացան օլիգարխներ, որոնք ոչ միայն որոշ դեպքերում թելադրում էին պետական իշխանությանը, այլ նաև հանդիսանում էին դրանց ֆինանսական աղբյուրը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ի տնտեսությունը դեռևս շատ խնդիրներ ունի լուծելու, որպեսզի գործի իրական ժողովրդավարական շուկայական տնտեսություն: Այդ խնդիրներից ամենակարևորը միջին խավի ձևավորումն է, որն օժանդակում է ոչ միայն տնտեսության զարգացմանը, այլ ընդհանուր առմամբ հասարակական կյանքի առողջացմանը, ինչը ակտիվորեն շրջափակվում է գոյություն ունեցող վարչակարգերի կողմից:

Առաջարկված ոլորտների ուսումնասիրության հիման վրա կարող ենք եզրակացնել, որ.

1. Քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտների համար ծառացել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ՈԿԿ-ների համար՝ դրանց նկատմամբ անվստահությունը պետության և հասարակության կողմից, պետության կողմից ֆինանսավորման բացակայությունը, կատարվող ծառայությունները և հասարակական իրական խնդիրների պահանջները չեն համապատասխանում միմյանց և այլն: Իսկ ԶԼՄ-ների համար՝ սուբյեկտիվիզմը և մանիպուլյացիաները, կախվածությունը իշխանությունից և հասարակական վերահսկողության բացակայությունը, ինքնակարգավորման հնարավորության սահմանափակումը, ինքնաֆինանսավորման սահմանափակումը և արհեստավարժության բացակայությունը և այլն:
2. Քաղաքական էլիտայի գրեթե բոլոր դերակատարները կոմունիստական աշխարհայացքի և քաղաքական հայացքների ծնունդ են, որոնց մեջ գերակշռում են այնպիսի արատավոր երևույթներ, ինչպիսիք են ձեռնհասությունը, արհեստավարժության պակասը, կաշառակերությունը, անարդյունավետությունը և այլն: Այս հանգամանքը քաղաքական էլիտային թույլ չի տալիս զբաղվել ժողովրդավարության ամրապնդմամբ, և ընդհակառակը՝ իշխող էլիտան, «կլանային» համակարգ ստեղծելուց բացի, նաև տարբեր մեթոդներով փորձում է քաղաքացիներին օտարել քաղաքական ոլորտից:

3. Քաղաքական և տնտեսական հասարակությունների փոխհարաբերությունները և փոխազդեցությունները ուսումնասիրելիս հանգում ենք այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ տնտեսական ազդեցիկ խմբերը, որոնք կարող են ճնշում գործադրել իշխանությունների վրա տարբեր դրամական օժանդակություններ, հարկային արտոնություններ և նպատակային վարկեր ստանալու համար, մենաշնորհային ձեռներեցները, որոնք կողմ են մասնակի շուկայական տնտեսության անցմանը և ձգտում են այնպիսի վիճակի, որի դեպքում գոյություն կունենա սեփականության իրավունք, բայց չի լինի բոլորի համար հավասար պայմաններով մրցակցող շուկա, և վերջապես միջին խավի բացակայություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Collier D. Levitsky S. Democracy ,With Adjectivesն Conceptional Innovation Comparative Research, Berkeley 1996
2. Schumpeter J. Capitalism, Socialism and Democracy. NY 1971
3. Dahl R. Polyarchy, Participation and Opposition New Haven 1971
4. Linz, Juan and Alfred Stepan. Toward Consolidated Democracies. Journal of Democracy. Vol.7 N2. 1996.
5. А. Татевосян. Выборы в Армении: на пользу или во вред демократии? Диаспора, нефть и розы. Под ред. И. Хаиндравы и А. Искандаряна. Ер. СМІ. 2005
6. ՀՀ սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ:
7. Հ. Վարդանյան, Ի՞նչու Հայաստանը հետսովետական անցումային լաբիրինթոսում, Հայաստանը փոխակերպվող աշխարհում, խմբ. Գ. Լալայան, Եր., ՌԱՀԿ, 2006
8. В. Долидзе. Власть, революция и бизнес в постреволюционном развитии Грузии. Центральная Азия и Кавказ N3(45). Швеция. CA & CC Press. 2006